

«ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆՈՒՐԵՔ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԷՐ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱՅ»

Չակերտեալ վերնագիրը առնուած է չակրկալուած ու չէպոք՝ բայց միաժամանակ հեղինակաւոր աղբիւրէ մը. «ՕՔՍՅՈՐԴԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒ» պատկառելի գործին 1977-ի վերատեսեալ տպագրութենէն: Անոր առաջին տպագրութեան—1957-ին—նախաբանին մէջ ըսուած է. «ԲԱՌԱՐԱՆս եթէ ոեւէ ջատագովական ուղղութիւն ունի՝ այդ ալ ներկայացնելն է իրականութիւնը առարկայական ճշգրտութեամբ»: Այնտեղ ԵՊԻՍԿՈՊՈՍ բառի բացատրականին սկիզբը ըսուած է. «Կը նշանակէ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ, բարձրագոյն կարգն է Քրիստոնէական եկեղեցիի պաշտօնէից մէջ»: Իսկ եպրակագութեան կը բերուի հետեւեալ հաստատումով. «Սկիզբէն մինչեւ Բողոքականութիւն՝ Քրիստոնէութիւնը ամենուրեք կազմակերպուած էր եպիսկոպոսական հիմքի վրայ» (էջ 175—176):

Վերնագրի մասին այս հակիրճ եւ առարկայական բացատրութենէն յետոյ կը մըլտենք բուն նիւթին մէջ:

*
* *

Մենք ընթացիկ տարւոյս մէջ յօդուածաշարք մը հրատարակեցինք «ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ» մակագրութեամբ, որ տպւեցաւ ԷԶՄԻԱԾԻՆ ամսագրի 1986 տարուայ Բ և Գ—Դ միացեալ համարներու՝ ինչպէս նաև ՄԱՐՄԱՐԱՕՐԱՔԵՐԹԻ 4—11 Ապրիլ թիւերուն մէջ. յոյս տեսաւ նաեւ որպէս առանձնատիպ պրակ: Այս գրութիւնը, գործածելով մեղմագոյն բացատրութիւնը, անհանգիստ ըրած և մտահոգութեան մատնած է արտաաւանդանքն որոշ ջրջանակներ:

Երբ կը ձեռնարկենք վերստին անյորդառնալ մեր վերոյիշեալ յօդուածաշարքով հրապարակ դրուած խնդիրին, մեր նպատակըն է աւելի յստակել մեր նախորդ գրու-

թեան հետ կապ ունեցող ինչ-ինչ հարցեր, որոնք յայտնապէս սխալ հասկցուած ու խեղաթիւրեալ ձեւով ներկայացուած էին վերոյիշեալ ջրջանակներու խօսնակներու կողմէ:

Առաջին հերթին կը հաստատենք որ մեր վերոյիշեալ յօդուածաշարքը արդարեւ զըրուեցաւ յարակցաբար «ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ» ձեռնարկին, որ խմբագրութեան մէջ է քանի մը տարիներէ ի վեր:

Խնդրոյ առարկայ մեր յօդուածաշարքով մեր նպատակն էր ներկայացնել այն պատմական հիմքերը, որոնց վրայ կազմուած էին մեր եկեղեցիի բարձրագոյն հեղինակութիւնը ներկայացնող ընդհանրական ժողովները, որոնք որոշումներ առած, տնօրինութիւններ կատարած ու կանոններ սահմանած էին Հայց. եկեղեցիի ամբողջութեան համար: Այդ ժողովներու կազմութեան մասին հակիրճ մէջբերումներով մեր նպատակն էր եղած զաղափար մը տալ, թէ նոյնիսկ խմբագրուելու ընթացքին մէջ եղող «Հայց. եկեղեցւոյ Կազմական Կանոնադրութիւնը» ինչ հիմքերու վրայ միայն կրնար կառուցւիլ: Որովհետեւ ըստ Առաքելական հաստատումին՝ «Հիմն այլ՝ ոչ ոք կարէ դնել քան զեղեալն» (Ա. Կոր. Գ. 11):

Իբրեւ երկրորդ կետ պէտք է հաստատենք նաեւ որ յօրինումի ընթացքին մէջ մտած «Կազմական Կանոնադրութիւնը» դեռ վերջնական ձև չէ ստացած. այդ իսկ պատճառով ցարդ չէ հրապարակուած. հետեւաբար չհրատարակուած և դեռ փոփոխութեանց ենթարկելի ձեռնարկի մը մասին խօսիլ և գրել այնպէս որպէս թէ վերջնական ձև առած է, արեւելահայերու դիպուկ բացատրութեամբ՝ «Խելօք մարդու գործ չէ»: Պատրաստուածը նախագիծ մըն է, այսպէս աւած, առաջին ձեռք մըն է, որ կրնայ բալուս «ձեռքերէ» անցնիլ նախ քան վերջնական ձև ստանալը, միջոտ Հայց. եկեղեցիի

հնաւանդ օրէնքներու, սովորութեանց եւ աւանդութեանց շրջագիծին մէջ: Ու այս առաջին ձեռքը պատրաստուած է պարզապէս դիւրացնելու համար ուրիշ լանձնախումբերու կամ այս մասին վերջնական որոշում տալիք գերագոյն կրօնական իշխանութեան աշխատանքները, որպէսզի անոնք աւելորդ տեղ ժամավաճառ ըլլան եւ գործեն արդէն իսկ նախապատրաստուած գետնի մը վրայ: Հետեւաբար աւելորդ եւ անտեղի կը զրտնենք այս մասին ռեւէ գանգատ կամ քննադատութիւն կարգ մը շրջանակներէ, որոնք որպէս թէ կատարուած իրողութեան մը առջեւ դրուած ըլլան այս նախագիծի պատրաստութեամբ:

Մենք վերոյիշեալ մեր յօդուածաշարքով ապացուցած էինք պատմական տոճալներով թէ համաքրիստոնէական ժողովները միշտ եւ միայն **նախկուպոսներէ բաղկացած էին**: Իսկ հայ եկեղեցական ժողովներուն գրեթէ կէսը **եկեղեցականներէ միայն** բաղկացած ըլլալով հանդերձ, մնացեալ կէսին ներկայ եղած են—մինչև իսկ ժողովը նիստի հրաւիրած են—հայ թագաւորներ եւ իշխաններ՝ իրենց իշխանական հանգամանքով եւ ոչ որպէս «աշխարհական» կամ որպէս ներկայացուցիչ «աշխարհականներու»: «Աշխարհական»ի եւ «եկեղեցական»ի տարբերութեան գաղափարը մեր ժամանակներու ծնունդ է, որ գոյութիւն չէ ունեցած նախնի դարերուն՝ երբ եկեղեցին կ'ըմբռնուէր **իր բոլոր կազմիչ տարրերուն միութեան մէջ**: Օրինաւորապէս գումարուած ընդհանուր կրօնական ժողով մը՝ համայն Հայց. եկեղեցիի ժողովն էր, անկախաբար այն իրողութենէն թէ ժողովը կազմող հոգեւոր իշխանաւորներու կողքին աշխարհիկ իշխաններ ալ կը գտնուէին կամ ոչ: Ուրեմն մեր մօտ ընդհանուր սկզբունքն այն եղած է, որ ժողովները կը բաղկանային եկեղեցիի վերատեսուչներէ՝ որոնց հետ յաճախ ժողովի ներկայ կըլլային նաև օրուան իշխաններէն շատեր իբրեւ գործադիրները ժողովի տակիք որոշումներուն: Արդ, այս իրողութիւնը հաստատելու համար անհրաժեշտ մէջբերումներ կատարած էինք պատմական աղբիւրներէն եւ նոյն ինքն այդ ժողովներու արձանագրութիւններէն:

Հետեւաբար այս մասին անսիման վերագրումներ և խեղաթիւրումներ չեն կրնար ռեւէ ձևով ստուէր ձգել պատմական այս տուեալներու ամբողջական և անհերքելիութեանը վրայ:

Մեր ալ նպատակն էր այն՝ ինչ որ Օրմանեան պատրիարք յառաջադրած էր իր «ՀԱՅԿԱՅԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ» ծանօթ երկի գրելու ատեն. «Մեր ժողովուրդը, որ կ'ապրի զանազան երկիրներու եւ ցամաքամասերու մէջ,

տարբեր եկեղեցիներու եւ յարանաւանութեանց ենթակայ (կրնայինք աւելցնել նաև զանազան խմբակցութեանց սխալ գաղափարներու ձեռնմտերուն տակ. Ե.) լիովին եւ ճշմարտապէս ճանչնայ եւ հասկնայ՝ **նաեւ Հայց. եկեղեցիի ժողովներուն կազմութիւնը**»:

Մեր պատմական այս հաստատումներուն դեմ ոմանք հակադրած էին «Ազգ. Սահմանադրութիւնը»: Պատմական իրողութիւն է, որ մեր ժողովուրդի երկու մասը զանգուածները—Արեւելահայերը եւ Արեւմտահայերը—որոշ ատեն մը—ոչ իսկ դար մը—կառավարւեցան երկու տարբեր կանոնադրութիւններով, որոնք ծանօթ են պատմութեան մէջ «Պօլօժէկիս» և «Ազգ. Սահմանադրութիւն» անուններով. (Այս վերջինին թրքերէնը, այսինքն պաշտօնական անունն է. «Նիպատ-նամէի միլլէթի էրմէնիան»—կանոնադրութիւն հայոց ազգին): Երկուքն ալ մաս կազմեցին օրենսդրութեանց՝ զանոնք վաւերացնող պետութեանց, այսինքն Յարական եւ Օսմանեան կայսրութեանց: Երկուքն ալ հայ ժողովուրդի կամ հայոց եկեղեցիի իրաւասու ռեւէ մարմնի կողմէ չեն հաստատուած, այլ պարզապէս հրահանգուած են ի գործադրութիւն պատմական աշխարհիկ պետութեանց կողմէ: Անշուշտ անոնք իրենց գործնական օգտակարութիւնը ունեցած են մեր ժողովուրդի ամբողջութեան համար, ուսկնալով հանդերձ նաեւ իրենց քննադատելի եւ թերեւս վնասակար կողմերն ալ, որոնց աւելորդ կը նկատենք անդրադառնալ այստեղ: Միայն կը հաստատենք որ անոնք, երկուքն ալ, այլեւս պատմութեան անցած են, անոնց ետին կեցող գործադիր աշխարհիկ իշխանութեանց անկումով: Անոնք ներկայիս պատմական վաւերագրային արժէք միայն կը ներկայացնեն եւ համադաս չեն, օրինակ, Հաճապիվանի կամ Երուսաղէմի ժողովներուն, որոնք իրաւասու և հանգամանաւոր եկեղեցական ժողովներ ըլլալով, անոնց որոշումներն ալ կը մնան ի պօրու Հայց. եկեղեցիի ամբողջութեան համար: Նոյնի չենք կրնար հաստատել «Պօլօժէկիս»-ի և «Ազգ. Սահմանադրութեան» համար:

Մեր յօդուածաշարքը կը հետապնդէր արմատապէս սխալ կազմուած եկեղեցական ըմբռնումի մը սրբագրութիւնը, հաստատելով որ Հայց. եկեղեցիի կանոնադրական աշխատանքները չեն սկսուած 1860-ական թուականներուն. կուգան անոնք չորրորդ-հինգերորդ դարերէն: Եւ «Ազգ. Սահմանադրութիւն» բառածր իրականին մէջ եկեղեցական կանոնադրութիւն մը ըլլալէ աւելի «Ազգի» մը վերաբերեալ կանոնադրութիւն մըն է, ինչպէս կը հաստատեն անունը և

սոյն կանոնադրության սկիզբը դրուած ըսկըպետութիւնը. իբրեւ այդ իր արժէքը եւ արժանիքը կրնայ ունեցա՞ծ ըլլալ: Իայց չէ «Սրբութիւն սրբոց» ար, որուն դպչիլը մեղք նկատուի: Ներկայիս հետապնդուած կամ խառնադրուածը սեշտեղ բերել է Հայց. եկեղեցիի այնպիսի «Կապաւական Կանոնադրութիւն» մը, ուր ճշտուած ըլլան եկեղեցական մարմիններու եւ պաշտօնեաներու իրաւասութիւնները եւ պարտականութիւնները, որպէսզի ոտնձգութիւններ չկատարուին իրարու իրաւասութեանց սահմաններուն մէջ և ասարակնորի եկեղեցիի միութիւնը: 11-է մէկ պաշտօնեայի կամ մարմնի արդէն իսկ ունեցած օրինաւոր իրաւասութիւնները կը կրճատուին կամ կը շնջուին, այլ կը հաստատուին եւ կը յստակուին: Եպիսկոպոսական իրաւակարգի վերահաստատումը շփոթել «կղերայետութեան» հետ, տգիտութեան նշան է եկեղեցիի հիմնական կարգաց եւ կանոնաց: Արդարեւ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԸ վարչական ու վարդապետական մարպերու մէջ ինչուսքը կապւած է ամբողջ Քրիստոնէական եկեղեցիին մինչև Բողոքականութեան ծագումը՝ տասընվեցերորդ դարուն, երբ շեղում կատարուեցաւ այս մարպին մէջ՝ եւ արևմտեան Քրիստոնէութենէն բաժնուող քրիստոնեայ հատուածը բազմաթիւ բեկորներու վերածուեցաւ, պարզապէս եպիսկոպոսական իրաւակարգէն ինքզինքը պոկած ըլլալուն համար: Ումանք ուրանալով այսպիսի հեղինակութեան մը գոյութիւնը մեր մէջ՝ դէպի նման կապւալուծում կ'ուզեն առաջնորդել նաև Հայց. եկեղեցին. գործնականապէս դժբախտաբար մասամբ առաջնորդուած են արդէն:

Ստոյգ է, ներկայիս փառք Աստուծոյ, Հայց. եկեղեցին դեռ Բողոքական չէ եղած, եպիսկոպոսական կարգը մեկ կողմ չէ դրած. ունինք բազմաթիւ եպիսկոպոսներ: Սակայն պետք է խոստովանինք որ երկար ժամանակներէ ի վեր դժբախտաբար չի կիրարկուիր մեր մէջ եպիսկոպոսական հաւաքական հեղինակութիւնը եւ իշխանութիւնը, զոր լիովին ունեցած եւ կիրարկած է Հայց. եկեղեցին անցեալին մէջ իր ընդհանրական ժողովներով: Աւելի քան երեք դար, հայ եպիսկոպոսութիւնը կիրարկած չէ ըլլալով իր հաւաքական հեղինակութիւնը, կարծես թէ բթացուցեր է իր այդ կարեւորագոյն կարողութիւնը, այն աստիճան՝ որ մինչեւ իսկ կարգ մը եպիսկոպոսներու մըտքին մէջ անգամ սողոսկած է անորոշութիւնը, թէ՛ արդարեւ նման կարողութիւն մը ունի՞ն իրենք: Իսկ անոնք որ վանապան ոչկրօնա-եկեղեցական պատճառներով չեն ուզեր Հայց. եկեղեցիի մէջ եպիսկոպոսական հաւաքական հեղինակութիւնը վերահաս-

տատուած տեսնել, կ'ուրանան անոր գոյութիւնը մինչև իսկ պատմութեան մէջ, հաւանակ բացալալտ պատմական տուեալներու:

Արդարեւ որոշ մարդիկ, չհաւատալով հանդերձ Հայց. եկեղեցիի հաւատոյ հանգանակին, եւ չընդունելով հանդերձ եկեղեցիին «Աստուծոյ ժողովուրդ» ըլլալու հաւաքականքը, եւ օգտուելով Հայց. եկեղեցիի ժողովական դրոյթենէն, եւ հայ եպիսկոպոսութեան հաշմանդանութենէն, որուն ենթարկուած է ան շնորհիւ «Ապգ. Սահմանադրութեան», եկեղեցիէն ներս սպողած են և իրենց տիրակալութեան ներքեւ առած են հայ ժողովուրդի կարեւոր մէկ վանգումը, զոր կը ջանան բաժնել հայ եկեղեցիի ամբողջութենէն: Ասոնք պզալով որ եթէ եպիսկոպոսութիւնը վերաւանձնէ իր պատմական դերը եւ միւս կողմէն եթէ եկեղեցին օժտուի իր կապական կանոնադրութեամբ, պիտի ստի իրենց ոտքերուն ներքեւ գտնուած փխրուն հողը, ահապանգ կը հնչեցնեն՝ մեր կողմէ ըստածները չարափոխելով, խեղաթուրելով, մինչև իսկ ուրանալով անոնց պատմական արժէքը, հանգելու համար այն եպիսկոպոսութեան թէ ոչ եպիսկոպոսական հաւաքական հեղինակութեան վերահաստատում կուզեն տեսնել և ոչ ալ՝ կապական կանոնադրութիւն ունենալ: Ներկայիս Հայց. եկեղեցիին մէջ տիրող անկապականեայ վիճակը և անիշխանական դրոյթները ումանք իրենց շահերուն և աշխարհիկ նպատակներուն աւելի նպատաւոր կը նկատեն, քան վերահաստատումը կարգաւորեալ դրոյթեան մը, ուր օրէնքը պիտի տիրակալէ քան քրեակարգը:

Եպիսկոպոսին պաշտօնը և պարտականութիւնը եկեղեցի օժել կամ եկեղեցիի պաշտօնեաներ ձեռնադրել կամ նման ծիսական արարողութիւններ կատարել չէ միայն, այլ նաեւ եւ առաւելաբար «վերակացու ըլլալ հօտին», ինչպէս Պետրոս առաքեալ կը լանձնարարէ եկեղեցիի երէցներուն, իբրեւ «երիցակից». «Արածեցէք որ քի ձեզ հօտը է Աստուծոյ, վերակացու լինել մի՛ իբրեւ աւկամայ, այլ կամեալ եւ ... յօժարութեամբ» (Ա. Պետր. Ե. 1—4): Կամ, ինչպէս Պօղոս առաքեալ կը պատուիրէ Եփեսոսի եկեղեցիի եպիսկոպոսներուն. «Ձգոյ՛շ կացէ՛ք անձանց եւ Հօտիդ՝ յորում եղ զձեզ Հոգին Սուրբ ՏԵՍՈՒՉՍ—եպիսկոպոս—հովուել զժողովուրդ Տեան» (Գործ. Ի. 28): Սովորական հովուական կեանքէ առնուած այս բառերը—արածել, վերակացու լինել, հովուել, եւ այլն—Աստուծոյ բանաւոր հօտին՝ հաւատացեալ ժողովուրդին կիրարկուած պարագային՝ պարզապէս կը նշանակեն կառավարել զանոնք աշարջութեամբ և հեղինակութեամբ:

Բնական և հոգեւոր հովիւին գլխաւոր պաշտօնը և պարտականութիւնը ոչ միայն հօտը «խոտաւէտ արօտներուն եւ հանդարտ ջուղերուն քով առաջնորդել» է, այլ նաեւ պահպանել գետնը կորուստէ եւ յափշտակիչ գայլերէն: Ասոր է որ կ'անկարկէ Պօղոս առաքեալ վերեւ քիչուած իր յորդորականին շարունակութեան մէջ, երբ կըսէ. «Քանզի գիտեմ ես եթէ յետ իմոյ մեկնելոյ գայցեն գալլը յափշտակողք ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտին, եւ ի ձեռն—ձեր մէջէն—յարիցեն արք որ խօսիցին թիւրս—սխալ բաներ—ձգել պաշակերտս զկնի իւրեանց: Վասն այսորիկ արքուն կացեք...» (Գործք Ի. 29—31): Այս «յափշտակող գայլերը» դժբախտաբար միշտ մտած են մեր եկեղեցիին մէջ՝ յաճախ գառնուկի զգեստով, յանուն «անսխալականութեան, միութեան, փրկութեան, ապաշխարանքի, Ս. Հոգին ստանալու» եւ այլ կրօնա-եկեղեցական խաթերու, եւ իրենց քաշած են շատեր, կապմով ուրոյն հաւաքականութիւններ արտաքոյ Հայց. եկեղեցիի: Ուրիշներ մտած են յանուն աշխարհիկ, քնկերային եւ այլ կարգախօսերու, յանուն «Ժողովրդավարութեան, լայնամտութեան, հակակոլորապետութեան, ապատութեան...» այլովքոյն հանդերձ: Ասոնք ալ, թէ՛ յափշտակած են մեր հօտէն շատեր եւ թէ՛ սխալ առաջնորդած եւ սխալ գաղափարներով մոլորեցուցած են մեր ժողովուրդը: Եպիսկոպոսութիւնը, որուն յանձնած է «Ս. Հոգին Աստուծոյ ժողովուրդը»՝ այսինքն եկեղեցին, «Արթուն» պիտի կենայ, այսինքն աչք պիտի չգոցէ եկեղեցիին մէջ պատահած անկարգութեանց, անջատողական հակումներուն, անօրինութեանց, յափշտակութեանց և բաժանարար արարքներուն հանդէպ: Այս բոլոր պատահած են պատմութեան մէջ և կը պատահին նաև այսօր Հայց. եկեղեցիին մէջ: Դժբախտաբար սակայն յանուն «Ազգ. Սահմանադրութեան» և «Ժողովրդապետութեան» հաշմանդամութեան մատնուած եպիսկոպոսութիւնը ոչինչ կրնայ ընել դարմանելու համար այս չարիքները: Իսկ անոնք որ այսօր իրենք պիտենք եկեղեցիի «առաջնորդները», «պաշտպանները», «տէրերը եւ պահապանները» կը յաւակնին իրաւունքով, ահաւոր անտարբերութիւն եւ մեղադրելի յոռութիւն կը պահեն հանդէպ այն բոլոր անկարգութեանց, որոնք դժբախտաբար ծնունդ առած են Հայց. եկեղեցիին մէջ, յաճախ իրենց իսկ մեղակցութեամբ:

Այսօր ալ հայ եկեղեցին լուծումի կարոտ շատ ընդհանրական հարցեր ունի: Հայց. «Մի միայն, Ընդհանրական, Առաքելական

եւ Սուրբ» եկեղեցին գործնականապէս երկուքի բաժնուած է արդէն: Ոմանք հաւկուր կը ձեռնառն եւ չեն ուզեր տեսնել այս իրականութիւնը, որ թուաբանական ստուգութիւն մըն է այլեւս: Հայ եկեղեցին Համաշխարհային եկեղեցիներու խորհուրդին մէկ ներկայացուցչութեամբ չմասնակցեցաւ, այլ երկու ներկայացուցչութեամբ: Երբ երկու «հաւասարազօր կաթողիկոսներու» վարչական վարդապետութիւնը կը ջատագովուի եւ կիրարկութեան կը դրուի, նախակրթարանի փոքրիկներն անգամ կրնան հետեւցնել թէ եկեղեցին մէկ չի կրնար մնալ այլեւս: Եկեղեցիին մէկութիւնը միայն վարդապետութեամբ եւ ծէսով չէ որ կը յատկանշուի, այլ առաւելաբար վարչութեամբ: Գրեթէ մէկ ենք Ասորի կամ Ղպտի եկեղեցիներու հետ վարդապետութեամբ, բայց մէկ եկեղեցի չենք: Գրեթէ մէկ ենք հայ կաթողիկ եկեղեցիի հետ ծէսով ու լեզուով, բայց մէկ եկեղեցի չենք: Երբ միատարր եկեղեցիի մը մէջ վարչական անջատում կիլնայ, երբ մէկ եւ նոյն հայ թեմի մը մէջ երկու տարբեր իրաւասութեանց ենթակայ հայ եպիսկոպոսներ կան պաշտօնի վրայ, եկեղեցին բացալատօրէն կը կորսնցնէ իր միութիւնը: —Դեռ կան թեմերու յափշտակութիւններ, թանկարժէք եկեղեցական ձեռագրերու զողութիւններ, ազգային կալուածներու ապօրէն վաճառումներ, թանգարանային հարստութեանց յափշտակութիւններ, նիւթական զեղծարարութիւններ, բարձրաստիճան հոգևորականի անբարոյ եւ հակակառնական կենցաղ, ելլն, ելլն, ելլն:

Ո՛վ պիտի լուծէ այս հարցերը: Այսօր ամենքս ալ անճարութեան մատնուած ենք. «տպասենք ու տեսնենք» քաղաքականութեան կը հետնինք, ոմանք ալ մեղապարտ լուծութիւն կը պահեն այս բոլոր անկարգութեանց եւ անօրինութեանց հանդէպ, երբ «Եկեղեցին Հայկականը», հայրենի եւ հոգեւոր տունը մեր բոլորի հոգիներուն, ամենքիս աչքին առջեւ «քար առ քար» կը քայքայուի: Ըստ Հայց. եկեղեցիի հիմնական սկզբունքներուն, աւանդութեանց և կիրառութեանց, վերոյիշեալ լուծումի կարոտ բոլոր հարցերը, Հայց. Առաքելական եկեղեցիի եպիսկոպոսութեան թէ՛ իրաւասութեան և թէ՛ պարտականութեանց սահմաններուն մէջ կ'իջնան: Հօր ու պատմական հիմք ունի հայ եպիսկոպոսութիւնը այս հարցերով սքաղուելու: Եթէ չսքաղուի, թերացած պիտի ըլլայ իր հիմնական պարտականութեան մէջ և ինք միայն պատասխանատու պիտի ըլլայ բոլոր հետեւանքներուն: Ուրիշ ոչ ոք: